# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ֆրանսիայի Հանրապետություն (Փարիզ) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Տաթևիկ Ստեփանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ֆրանսիայի Հանրապետություն, Փարիզ 2024 թվականի մարտի 8-9-ը

4. **Հրավիրող կողմը.**
   «Միասնականության ուժը» ասոցիացիա

5. **Գործուղման նպատակը.**
   Մասնակցություն Կանանց իրավունքների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպվող «Միասնականության ուժը» խորագրով միջոցառմանը:

6. **Քննարկված թեմաները.**
   - Միասնականության ուժը;
   - Կանանց առաջադիմական զարգացում և հզորացում;
   - Կանանց իրավունքների պաշտպանություն և խթանում;
   - Պայքար գենդերային խտրականության, անհավասարություն դեմ
   - Կանանց նկատմամբ բռնություն;
   - Կանանց համար անբավարար տնտեսական հեռանկարներ;
   - Կանանց ահմանափակ հասանելիություն տնտեսական հնարավորություններին:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Միջոցառմանը մասնակցում էին Ֆրանսիայի մշակույթի նախարար Ռիմա Աբդուլ Մալաքը, «Միասնականության ուժը» ասոցիացիայի նախագահ Էլիզաբեթ Մորենոն, ինչպես նաև ներկայացուցիչներ Աֆրիկայից, Յունեսկոյից և այլ հասարակական կազմակերպություններից:

Միջոցառման ընթացքում հանդես եմ եկել ելույթով, որում, մասնավորապես, ներկայացրել եմ Հայաստանի Հանրապետության տեսլականը՝ կանանց առաջադիմական զարգացման և տնտեսական հզորացման համար կենսակայուն համակարգերի, նորմերի և ճկուն քաղաքականության կառուցման վերաբերյալ:
Ընդգծել եմ Հայաստանի Հանրապետության մարդու հիմնարար իրավունքների վրա հիմնված մոտեցումը՝ ուղղված կանանց հզորացմանը, որը ՀՀ կառավարության բարեփոխումների օրակարգի համար կարևոր միջճյուղային առաջնահերթություն է, և շարունակական աշխատանքներ են տարվում, որ այն իր արտացոլումը գտնի իրավական և նորմատիվ դաշտում:

Հայաստանի Հանրապետությունը մարդու իրավունքներին վերաբերող բոլոր հիմնական փաստաթղթերի մասնակից է և նշել եմ, որ կանանց իրավունքների պաշտպանության և խթանման, գենդերային խտրականության դեմ պայքարի և գենդերային հավասարության ապահովմանն ուղղված քայլերը, ինչպես նաև կանանց նկատմամբ բռնության համար պատասխանատվությունը մարդու իրավունքների համատեքստում կարևոր առաջնահերթություններ են մեր միջազգային բազմակողմ հարաբերություններում:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
Միջոցառման ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**
   - Համագործակցություն զարգացնել «Միասնականության ուժը» ասոցիացիայի հետ, ներգրավելով վերջինիս ՀՀ կառավարության կողմից կանանց հզորացման ուղղությամբ իրականացվող բարեփոխումների գործընթացում:
   - Նպաստել «Միասնականության ուժը» ասոցիացիայի և ՀՀ-ում գործող համապատասխան հասարակական կազմակերպությունների միջև

համագործակցության զարգացմանը՝ նպատակ ունենալով իրականացնել փորձի փոխանակում և ինստիտուցիոնալ զարգացում:

**10. Ստորագրությունը, ամսաթիվը:**

X _____

13/03/2024